Պարույր Սևակ

Անլռելի զանգակատուն

3

ՂՈՂԱՆՋ ԱՄԱՌՆՕՐՅԱ

Եվ որտեղ երգը՝ այնտեղ էր հիմա և Կոմիտասը:
Նա՛, որ դեռ երեկ, իբրև մի ձայնեղ երգիչ-տիրացու,
Երգչախմբի մեջ մեներգ էր միայն վսեմ տարածում
Ու լսարանում հեզ պատասխանում սերտումի դասը,-
Հիմա դարձել էր խմբավար վանքի,
Դարձել էր հիմա երգի դասատու:
Թեթևանում էր երբ աշխատանքից,
Ծառայությունից օձիքն ազատում,
Հեռանում էր նա խուցից ու վանքից,
Գնում էր այնտեղ, ուր երգն էր հնչում:
Իսկ նա հնչում էր ամենո՛ւր ու մի՛շտ,
Ամենո՛ւր ու միշտ,
Ուր հայն էր շնչում:
...Ինչպես աղջիկն է հանկարծ հարսնանում՝
Գարունն էլ այդպես դառնում է ամառ.
Համբարձման տոնը պաղ հովն է տանում
Ու տեղ է բանում,

Որ գա Վարդավառ:
Քանի չեն թոշնել կաթնառատ խոտեր,
Կանաչ ու ծաղիկ,
Գերանդիներն են սրվում-բթանում,
Եվ ծլարձակման հաղթ օրենքի դեմ
Կարճ հաղթանակ է վերստին տանում
Ոգին խոտքաղի:
Բայց քիչ առաջվա մարտում կատաղի
Յուրաքանչյուրը մի անգութ մարտիկ՝
Հիմա տմարդի
Նույն տղամարդիկ
Ասես գթության եղբայր են դառնում՝
Իրենց ավշաքամ զոհերին առնում
Իրենց իսկ ուսին, իրենց շալակին,
Խնամքով դարսում սայլ-պատգարակին,
Ջորուն են բառնում
Կամ ավանակին,-
Եվ մեռած խոտեր, ծաղկունք մահացող
Գերեզմանի տեղ մարագ են գալիս,
Որ այնտեղ դառնան բույրի պահածո:
Շոգը, որ մինչ այդ հյուր էր ցանկալի,
Աներեսորեն դառնում է տանտեր
Ու խռովեցնում կնկան ու մարդուն:
Անբոց վառվում են արոտ ու հանդեր,
Արծաթ է հալում վաղահաս գարին,
Այնինչ հաճարի,
Ցորենի արտում
Հասկերը հասուն,
Հասկերը հոսուն,
Յուրաքանչյուրը մի հրե լեզու,

Ձգվում են վերև, կարծես թե ուզում
Մոտիկ երկնքի կապուտակ ծովից
Ջովություն ըմպել,
(Ինչպե՞ս չէ՝ կըմպես) ,
Չեն ըմպում սակայն, այլ միայն լիզում
Եվ անմիջապես քաշում են լեզուն,
Երբ հասկանում են բուսական խելքով,
Որ մինչև անգամ երկինքը ծավի
Նո՛ւյնպես կապտել է անհագ ծարավից...
Ամառվա արփին այնպես է կիզում,
Որ արևի տակ,
Թեկուզ անկրակ,
Եթե ուզում ես՝ «իշխան» տապակիր.
Անշարժանում են լճեր ու լճակ,
Դառնում են կարծես կապույտ ապակի,
Մինչդեռ նրանց տեղ օդն է ծփծփում ալիքով հրե,
Եվ օդի հետ էլ երգն է ալիքվում.
-Հո՞վ արեք, սարեր...
Սարերը սակայն
Հովը պահում են հոտերի համար և սարվորների,
Որ գյուղը թողած՝ սար են բարձրանում:
Պղնձի նման հողն է կարծրանում,
Ու երգն էլ հիմա
Աղոթքի նման
Երկինք է թռչում,
Ամպերին կառչում.
-Մի քիչ զո՞վ արեք...
Ամպերը սակայն ինչպե՞ս զով անեն
Եվ ինչպե՞ս անձրև թափեն, ծով անեն,
Եթե բովանդակ երկնակամարին

Դեղի համար էլ ամպիկ չես ճարի:
Եվ աշխատանքի ոգին է կրկին
Խելահեղորեն տիրում ամենքին:
Գյուղացիները, տղամարդ թե կին,
Հավ-աքլորի պես զարթնում են հիմա
Գիշերը դեռ կես և ոչ թե ծեգին
Եվ, աքլորների-հավերի նման,
Իրիկնանալիս՝ դեռ հացը բերնում՝
Չե՛ն թառում - օ չէ՛ - հոգնած ու դադրած
Ոչ թե քնում են, այլ կարծես մեռնում.
Իրենց խշխշան անկողիններին
Քրիստոսի պես
Խաչվում են այնպես,
Որ կրկին շուտով
Հարություն առնեն
Եվ կիսամութով
Վերստին բռնեն
Նույն աշխատանքի
Վառվռուն պոչը
Ու նորից խառնեն
Հրդեհին ծեգի
Իրենց աչքերի հրավառ բոցը,
Եվ որ քրտինքի շիթը ծորացող
Անվերջ շտկըվող - անվերջ կորացող
Իրենց թիկունքին վազի մանեման՝
Ճամփան կորցրրած մրջյունի նման...
Եվ աշխատում են մրցման մեջ մտած,
Աչքերը հույսից ու երազից թաց,
Ու հետն էլ երգում.
-...Զո՛վ արեք մի քիչ...

Հովից են երգում,
Ջովից են երգում,
Որ շուտ չդադրեն տաքից ու շոգից:
Իսկ շո՛գը, տա՛քը,
Իսկ տո՛թը, տա՛պը...
Թո՛ղ որ շները՝
Բները մտած,
Շոգից շնչասպառ՝ լեզուն դուրս գցեն,
Իրենց կաս-կարմիր բոցաձև լեզուն.
Կարծես սխալմամբ կրակ են կրծել
Եվ հիմա, իզո՛ւր,
Ործկալ են ուզում...
Շոգի սիրահար դդումներ ցմփոր
Թո՛ղ որ թխսի պես նորից ետ տանեն
Փարթամ թևերը իրենց թաղերի
Եվ ճտերն իրենց ետևը գցած՝
Ցանկապատն ի վեր արևկող անեն,
Թառեն Էյվանի փայտե ճաղերին...
Ուրիշի աչքին խիստ ծիծաղելի
Արևածաղկի մի պուճուր գնդիկ,
Կապկելով հսկա մեր երկրագնդին՝
Երկրագնդի պես ծանրորեն ու լուրջ
Թո՛ղ որ պտտվի ինչպես արևի,
Այնպես էլ նաև իր առանցքի շուրջ՝
Անշարժ պահելով ծաղկատերևի
Դիրքը նախնական...
Թո՛ղ որ շոգն իրոք չարամտորեն
Մարդկանց խեղդելու մահափորձ անի,
Եվ շուք ու շվաք տան վկայություն,-
Միևնույնը չէ՞ գյուղացու համար,

Թե նա մեռնի էլ՝ պիտի գործ անի,
Քանի որ ամա՛ռ, ամա՛ռ է, ամա՛ռ...
Խեղճ այրի կնոջ անծեփ-անսվաղ տանիքի նման՝
Այգիների մեջ հասած պտուղն է անվերջ կաթկթում.
Պիտի հավաքել-փռել տանիքին
Շեկ ծիրանները՝
Մանրակոտորակ արևների պես,
Սև սալորները՝
Եզան աչքերի միամիտ փայլով,
Եվ կորիզահան դեղին դեղձերը՝
Անանուն ծաղկի փերթերի նման...
Սայլը բեռնաբարձ՝
Ծանր խրձերից խղճուկ ճռռալով՝
Անիվի կունդից իր մաշված սռնու
Քիթն է մերթ հանում
Ու մերթ՝ ետ տանում,
Աղուրի փոշում, լորձունքի նման, մազութ ծորալով:
Իսկ ջառջառների սեպերը երկաթ,
Քար ատամները գիշատիչ կամի
(Ծամի հա՛ ծամի)
Հաշանն են ծամում, հաշանը ոսկե,
Որ չուզենալով դարմանը խառնել
Սրսուռ ցորենի արևահամին,
Մի բան է տենչում՝
Էրանի քամի.
-Սարե՛ր ջան սարե՛ր,
Մի քիչ հո՛վ արեք...
Իսկ քամին
Կարծես մարդու գնացած աղջիկ է դարձել՝
Քանի ամիս է՝ հերանց չի գալիս,

Իսկ եթե եկավ՝ չի ուզի գնալ.
-Օտար դո՞ւռ ընկնեմ,
Լավ է ջո՛ւրն ընկնեմ...
Մղեղն է թառում պատահած տեղում և ամեն ինչի,
Մինչևիսկ վանքում կիսաբաց ննջող Աստվածաշնչին.
-Մեղա՛ քեզ...
Աստված բարին կատարի:
Իսկ բարին՝
Թառած դեզի կատարին,
(Պարզ խրտվիլակի ծիծաղկոտ տեսքով)
Ծտի պարսերն է շեղջերից քշում.
Իսկ բարին՝
Մաղված ցորեն-գարու հետ
Փայտե ամբարի դռնով է խշշում:
Մեծ կարասները
Ծույլ հորանջում են դատարկ մառանում,
Բայց վնաս չունի՛,
Խաղողի վազն է կրկին մայրանում.
Ճութը, ծոցի պես, ուռչում է հյութից
Եվ օգոստոսյան եռացած օդից
Ու խեղդող տոթից
Շնչահատ արդեն,
Մի պահ զրկվելով աբուռ-ամոթից,
Անզգուշորեն կոճակն է բացում զմրուխտ թփերի.-
Հերն էլ անիծած.
-Ի՞նչ անեմ, Մարե՛,
Արևն ինձ կերե՛...

ՂՈՂԱՆՋ ԱՇՆԱՆԱՇՈՒՆՉ

Բայց ահա
Նաև շոգն է կոտրվում՝ գոռոզության պես,
Եվ տեղը զիջում իր գինն իմացող համեստությանը:
Կապող անձրևի միջամտությամբ
Երկիր ու երկին
Գրկվում են կրկին՝
Վերջ տալով իրենց սուր գժտությանը:
Եվ աշունն էլի,
Չարչիների պես ու բոշաների,
Տեղից-տեղ գնում,
Դռներ է ընկնում
Եվ զբաղվում է իր ներկարարի սիրած փեշակով:
Չարչին բարձրականչ կհպարտանա
Իր հուլունքների հազար տեսակով,
Ասեղ ու շյուղեր, ծամոն կծախի
Պառավ տատերին, հարսներին շարմաղ:
Բոշան ցորենով զամբյուղ կփոխի
Եվ ինչով ուզես՝ մեծ ու փոքր մաղ:
Մինչդեռ աշո՛ւնը...
Նա բա՛ն չի ծախում,
Օդ ու եղանակ, գույներ է փոխում:
Մինչդեռ աշո՛ւնը
Միայն բաշխում է՝
Ցորեն ու գարի,
Խմիչք ու փշատ,
Հազա՛ր մի բարիք
Եվ, ամենից շատ,
Անվարձ ու ձրի
Միայն նախշո՛ւմ է...
Եվ այնպես դանդաղ, որ չես նկատի.

Ավելուկների ծամերը կանաչ
Էյվանի դեմքին ու տան ճակատին
Դեղնում են հանկարծ, դառնում անճանաչ:
Ու քաղցրությունից ճաքող սեխերի
Անուշ բուրմունքով
Օծվում են կրկին բոստան-բաղերը,
Իսկ ձմերուկի կերված ճաղերը -
Լուսնի հաստ-բարակ փուլերի նման -
Հող ու փոշով են ամպոտվում հիմա:
Ընկուզենիներն իրենց սաղարթով
Այնպես են մեկից դառնում հուրհուրան,
Կարծես թե լինեն հսկա ծխամորճ,
Եվ որպես ծխի առկայծող քուլա՝
Մշուշն է սողում դաշտերի վրա
Ու պտույտ տալիս
Ծերուկների պես պպզած լեռների
Սանրը չտեսած-փոչոտ գլխի շուրջ:
Մինչ դեղձին պարկեշտ ու ծիրանին լուրջ
Իրենց սաղարթն են աշխատում կոճկել լիրբ քամու հանդեպ,
Հաստլիկ ուռենին ու ձիգ կեռասին
Պատրաստ են իսկույն իրենց լաչակը գլխներից քանդել՝
Մարդաթող հարսի,
Լաչառ կնկա պես:
Նորից, իսկապե՛ս,
Աշուն է, աշո՛ւն:
Նորից սանդի մեջ ծեծում են կորկոտ,
Ձավար են խաշում,
Տաք հնձաններում ճմլում են խաղող
Ու գինի քաշում:
Նորից արիշտան,

Որ ձողերին են շարեշար փռել,
Թաց՝ օրորվում է լուռ ու անշշուկ,
Չորացած՝ խշշում
Ու փշուր-փշուր
Թափվում է գետին՝
Խսիր-կարպետին:
Քամին կարծես թե բան է կորցրել
Եվ որոնելով ավլում է գետինն
Ու տեղից-տեղ է խաշամը քշում:
Եվ տերևների հաստ ծածկույթի տակ
Առվակ ու վտակ
Հոսում են ոչ թե խշշոցով ջրի,
Այլ կարծես անվերջ տժտրժում-թշշում՝
Իրենց մեջ ընկած բոց տերևների
Չմարող հրից:
Սերկևիլները սրտի թրթիռով
Վերջինն են լքում անխռով այգին
Ու տեղափոխվում-մտնում են սնդուկ,
Որ հաստակաշի ու կողքապնդուկ,
Զառ խնձորների հարևանությամբ
Պլըլվել սիրով ու գորովագին
Կանանց պահուստի շորերին փոթ-փոթ
Եվ իրենց բույրը խենթորեն խառնեն
Նրանց մարմնային բուրմունքին տարփոտ:
Աշուն է, աշո՛ւն:
Լուսաստղը հիմա
Նույնիսկ ցերեկվա դռներն է մաշում
Եվ ճառագայթուն ու մեծ է այնքան,
Կարծես թե բացված հովհար է որ կա:
Հովհարը սակայն

Ո՞ւմ է հարկավոր, երբ շոգ չէ արդեն,
Երբ եղանակը այնքան է ցրտել,
Որ նորից ահա տան խոնավ օդից
Մինչ աղը լալիս՝ լավաշն է ծաղկում,
Իսկ պաղ եղյամի հալվելուց հետո
Կալում մնացած կույտը ծղոտի
Կպչում է իրար,
Կարծես թե թաղքում
Մազերի նման շեկլիկ աղջկա:
Անցած ձմռանը նշանվածների կոպերի տակով
Անհամբերությամբ սահում է հիմա երազանքն այրող
Այն հարսանիքի,
Որ պիտի լիներ, բայց դեռ, ա՜խ, չկա:
Գիշերվա կեսին ոռնոցն է լսվում
Հոտ ու նախրի հետ սարից գյուղ իջած անկուշտ գայլերի,
Իսկ նույնքան անկուշտ ջրաղացների անխոնջ չախչրկան
Կոչնակի նման կանչելով անվերջ՝
Ճամփան է պահում աղունով բարձված սողուն սայլերի:
Եվ ահա՛ -
Կամաց քշեք սելերը...
Եվ ահա՛ -
Աշուն եկավ սարիցը...
Եվ ահա՛,
Այստե՜ղ -
Երկինքն ամպել է...
Եվ ահա՛,
Այնտե՜ղ -
Էս լուսնակ գիշեր...
Եվ ահա՛ -
Այսպե՜ս՝

Միշտ նա է ներկա,
Նա՛՝
Շինականի հար հավատարիմ,
Հավետ անբաժան
Մեծ օգնականը.
Նա՛՝
Շինականի համկալ-ընկերը,
Հոտաղ-մշակը
Ու... երրորդ ձեռքը.
Նա՛՝
Ինքը... ե՞րգը:

ՂՈՂԱՆՋ ԱՀԱԳՆԱՑՈՂ

Ե՞րգը...
Կարծես տնից ելած մի պանդուխտ էր բազմաթափառ
Եվ ուզում էր կրկին փարվել հայրենիքին:
Հայրենիքն էր... նրա հոգին:
Ե՞րգը...
Կարծես մի թռչուն էր, որ չվելով բնազդաբար,
Ետ էր թևում գիշերն ի լույս և օրն ի բուն:
Եվ նրա շեն ականջն էր... բույն:
Այդ ակա՞նջը...
Ջրվորների,
Սարվորների ուրախ կանչը,
Ձույլ զանգերի ծույլ ղողանջը,
Առվի հիմար բլբլոցը,
Ճրագների պլպլոցը,
Հովի հունչը,
Թոնրի շունչը,

Մերժված սրտի խուլ մրմունջը,
Երազների ու ծաղկունքի փսփսուքը,
Ողբասացի կոծն ու սուգը,
Արտասուքը,
Որ ծնվելով վառ ցավի մեջ,
Դուրս չի պոռթկում,
Այլ կաթում է սրտի խորքում,
Ինչպես մթին անձավի մեջ,
Եվ այդ ահեղ կաթկթոցը
Մինչև անգամ քար է ծակում.
Կեսչոր-կեսթաց փայտի նման
Վառվող հույսի ճթճրթոցը,
Որ վառ ցրտի դեմ-հանդիման
Ոնց էլ լինի դուռ է փակում.
Չարաճճի քամու առաջ
Տերևների սրսրփումը՝
Աշնան վառած անհուր բոցում.
Նոր մայրացած ստինքների
Մեկմեկի հետ լուռ շփումը՝
Այգու նման բուրող ծոցում.
Ջրի ճամփին աղջիկների քչփչոցը,
Մինուճարին հեռու ճամփող
Մոր խելագար պաչպչոցը,
Տաք հնձանի կպչուն դռան զիլ ճռինչը,
Անգրող տեսած թուխսի սարսափն ու կռինչը,
Նորածինի ազդարարիչ, հրամայող բարակ ճիչը,-
Ամե՛ն, ամե՛ն, ամե՛ն ինչը
Ալիք տալիս,
Գալի՜ս-գալի՜ս,
Ծովանում էր այդ ականջում,

Հազար ձևով այնտեղ հնչում,
Հետո տանջում ու պահանջում՝
Ելնե՞լ-թափվե՞լ սրտերից-սիրտ,
Հոգուց-հոգի,
Հույզով ցողել
Ու ողողել
Ամեն ոքի...
Ա՛յն, որ այնպես ցիրուցան էր,
Կամենում էր լինել հավաք.
Ա՛յն, որ միայն աղմուկ էր դեռ,
Ցանկանում էր դառնալ նվագ,
Ա՛յն, որ հնչյուն, անկապ ձայն էր,
Եղանակ ու երգ էր ուզում,-
Վարարումի ու հորդումի
Ելք էր ուզում:
Իսկ թղթերին՝
Հազար ու մի երգ-եղանակ,
Դարձած նոտա.
Իսկ թղթերին՝
Հազար ու մի խաղիկ-տաղիկ
Հայաշխարհիկ,
Նաև օտար:
Իսկ թղթից դուրս
Որքա՜ն երգեր,
Որ չեն տեսել ձայնագրրող,
Օտար ժանգը գոնե քերող
Հմուտ ձեռքեր:
Իսկ թղթից դուրս՝
Որքա՜ն-որքա՜ն
Շինականի ձեռքով ցանված,

Բայց չհնձված-անտեր բերքեր...
Ա՛յն, ինչ ականջն էր հավաքել,
Ա՛խ, թե հիմա իր շրթունքով
Կրկնապատկած ետ տար կրկին,
Սիրով բաշխեր նրանց, ովքեր
Իրենց արյամբ ու քրտինքով
Խմորում են տվել երգին:
Իր հետ մեկտեղ այն ժամանակ
Գյուղացին էլ գուցե երգեր.
-Հո՛վ , հո՛վ, հո՛վն ընկավ,
Դարդս ծո՛վն ընկավ...

ՂՈՂԱՆՋ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ

Սակայն դարդը խեղճ ու կրակ գյուղացու
Եթե անգամ
Ծովն ընկավ,
Նույնիսկ ծովն էլ դարդի վրա գյուղացու
Իր ծովային աղաջրի փոխարեն
Կարծես դիտմամբ յուղ ածում,
Դարդը յուղով է օծում.
Որ... ջրի մեջ չընկղմի
Ու չդառնա կեր տղմի:
Կարիքների ալիքային մոլի ծա՛փ,
Ջրկանքների կոհակացող խաղացո՛ւմ,-
Եվ նույն դարդը ողջ-առողջ
Շպրտվում է նորից ափ
Ու... կպչում է գյուղացուն,
Ինչպես շապիկը մեջքին,
Տաք քրտինքից թաց մեջքին,

Եվ ի՜նչ քրտինք.
Հիմա արդեն իսկապե՛ս որ աղաջուր:
Ջուր է գեղջուկն աղաչում
Եվ հույսի շողն իր աչքի
Նետում երկնի հրաշքին:
Վերում՝
Աստված ծանրականջ,
Ցածում՝
Աղոթք ու զուր կանչ,
Արտեր՝ պատառ-պատառիկ,
Սարի լանջին կարկատան.
Ծխոտ-մրոտ պատ-առիք,
Բոբիկ ոտներ, հին քաթան.
Եվ հազար ու մի կարիք,
Հազար ու մի ծակ ու ծուկ.
Պիտի ուզեն հարսնացու,
Առնեն շոր ու մատանիք,
Պիտի փոխեն ծածկը տան,
Պարտքը մարեն, հարկը տան
Ու կաշառեն ջրպետին:
Նաև պիտի... դեռ պիտի...
Պիտի վարեն ու հերկեն,
Վարեն-հերկեն
Ու երգեն.
-Օրհնյա՛լ է աստված.
Հիշյա՛լ է աստված...
Աքլորը կանչեց գոմի դռանը,
Դեռ նոր է բացվում աղոթարանը.
-Աստվա՛ծ, փառքդ շա՛տ...
Եզնարած տղան թող անուշ քնի,

Գութանավորը վեր կենա բանի.
-Աստվա՛ծ, փառքդ շա՜տ...
Գութանն է գնում-գութանն է գալիս.
-Այ ճը՛լ-վը՜ստ, ճը՛լ-վը՜ստ...
Ուրախությունից ակերն են լալիս.
-Այ ճը՛լ-վը՜ստ, ճը՛լ-վը՜ստ...
Մաճկալը՝ մաճին,
Իմ պաչն իր աչին.
-Շո՛ւռ տուր, սև՜ արա:
Հոտաղը՝ լծին,
Մատաղ վարոցին.
-Ձե՛ն տուր, թև՜ արա:
Հո՛ արա, Շեկո՜,
Շո արա, Լաչի՜ն.
-Մեջը կորդ մնաց:
Քշիր հա՜, Նիկո՛,
Դաղի՛ր սատկածին.
-Գնաց հա՜ գնաց:
Գնաց հա՜ գնաց.
-Ոտրդ լե՛ն արա,-
Էն էլ ո՜նց գնաց:
Գնաց հա՜ գնաց.
-Տղա՛, ձե՜ն արա,-
Էլ բան չմնաց:
Արտը լեռ քար է,
Առը երկար է.
-Բայց խոփն էլ սուր է:
Քաղցած ենք, ծարավ,
Ա՛յ հարս, ի՜նչ դառավ.
-Բա գալրդ ո՞ւր է:

Է-հե՛յ, հորիվա՛ր, ճիպտի՛ն տուր,
Սևին հո՛ արա, Կապտի՛ն տուր.
-Կապո՛ւյտ եզ, չսատկե՛ս հա:
Թե հո ես անում՝ լա՛վ արա,
Բերան չես բանում, ա՛վարա.
-Վարել ենք արտի վատ կեսը:
Ծիր տանք հա՛ ծրենք,
Մեր դարդը ցրենք.
-Ես քեզ եմ ասում,
Սրա՛պ ջան,
Հողը սևանա:
Հացն եկավ: Բանանք,
Ուտենք կշտանանք,
Որ, քեզ եմ ասում,
Արա՛ք ջան,
Ուսըդ հովանա:
Ձեզ՝ խոտի լավը,
Մեզ էլ՝ փլավը.
-Հորովե՛լ, հո:
...Դե՛, ելեք լծենք,
Խոփը հող գցենք.
-Հո՛, հորովե՛լ:
Նո՛ր ակոս բացենք,
Խո՛ր ակոս բացենք
Է՛լ առավել:
Հաջող է տարին.
Նամուսով վարի՝
Մեկին յոթ կտա:
Խոտի տեղ դու, տե՛ս,
Չոր ճիպոտ կուտես,

Ա՛յ եզ անպիտան:
Գիտե՞մ, ոտմաշ ես,
Ոտերի՛դ մատաղ,
Բա ե՞ս, Ծիրա՛ն ջան,
Իմ սի՛րտն է մաշած:
Քրտընքախաշ ես,
Իմ համե՛ղ հոտաղ,
Բա ե՞ս, Տիրա՛ն ջան,
Իմ սի՛րտն է խաշած:
Ականջ մի՛ դրեք.
Հո՛ արեք.
Դարդներրդ ցրեք.
Շո՛ արեք:
Դարդը քա՞ր կանի...
Աստված ճա՛ր կանի.
-Հորովե՛լ:
Աստված ինչ չանի՝
Մարդը դի՛նջ կանի.
-Առավե՛լ:
Եզո՛, շո՛ւտ արա, ո՛տ արա, ախպե՛ր,
Դադրած մաճկալը քո ցա՛վը տանի.
-Պրծնենք ու գնանք:
Վրան են զարկել սև ու մութ ամպեր,
Ձեռ ու ոտ արեք, ա՛յ, անձրև կանի.
-Մոլո՛ր կմնանք:
Ուժ տուր՝ վերջանա,
Ձանրդ դինջանա.
-Հո՛ արա, էյ ե՛զ:
Վարենք ու ցանենք,
Խոփը դուրս հանենք.

-Լինենք պարզերես:
Թող չկտրվի ակի ճռինչը,
Գութանի անուշ ճլվստիկ ձենը.
-Իր ձենի՞ն մատաղ:
Առանց գութանի աշխարքը ի՞նչ է,
Նրա վրա է աշխարքի շենը.
-Իր շենի՞ն մատաղ:
Հո՛ արա, եզո՛ ջան, հորովե՛լ,
Ծարավ ես՝ ես էլ եմ ծարավել,
Դադրած ես՝ ես քեզնից առավել,
Ինձ էլ է արևը խորովել.
-Հորովե՛լ:
Թե մեզնից աստված է խռովել՝
Աստըծուն ձեն կտանք առավել.
-Օրհնյա՛լ է աստված,
Հորովե՛լ.
Հիշյա՛լ է աստված,
Հորովեեեե՛լ...

ՂՈՂԱՆՋ ՑԱՎԻ ԵՎ ԲՈՂՈՔԻ

Մեր խելքն էր մեզնից խռովել.
Մոռացած Կալերգ, Հորովել,
Մոռացած խաղիկ, զվարթ տաղ՝
Նեյնիմ-ով ու Բեյթ-ով էինք
Շատերս մեր հոգին պարպում.
Թողած մեր գինին անխարդախ՝
Օտարի շերբեթ-ով էինք
Մեզ խաբում
Եվ ոչ թե հարբում:

Մենք կայինք,
Մենք Դավիթ էինք,
Սակայն դեռ մեզ չգիտեինք.
Դեռ պառվի շաղգամի արտում
Քիչն ուտում,
Շատն էինք ջարդում՝
Մանկորեն ոտքի տակ տալիս:
Եվ մեկը պիտի գար ահա,
Մեզ նորից կայծակը տար թուր
Ու թամբեր Քուռկիկ Զալալի,
Տար նաև մկունդ ու վահան,
Որ... Մսրա նվոցին ընդդեմ
Զգայինք մեզ Ձենով Օհան:
Սկզբում ինքն էլ վարանում՝
Գործում էր, բայց դժվարանում
Իր գործին տալ հարմար անուն:
Եվ ահա իր գործը նաև
Ստացավ անունն իր վայել.
-Աշխարհում դուք ձե՛ր երգն ունեք,
Ձե՛ր երգը, խլացա՛ծ հայեր...
...Ու թե հայ խաղի ու տաղի հանդեպ
Խլացել էին մեզնից շատերը,
Եթե մերային խեղճ ու վատերը
Մեր արդար հացն ու պանիրը թողած,
Աչք էին տնկում օտար փախլավ-ին,
Ապա օտարը՝
Ամենա՛յն սիրով,
Ապա օտարը՝
Խոսքերո՛վ,
Գրո՛վ -

Թաքուն-բացահայտ մեզ էր բանսարկում՝
Մի ամբողջ ազգի հեշտորեն զրկում՝
Իր անկապտելի երգից ու պարից,
Մի ողջ ժողովուրդ կապում օտարից,
Օտար դռանը տնփեսա սարքում
Մի տղամարդու, որ շեն տուն ուներ,
Տան մեջ սյուն ուներ,
Սյան վրա՝ տանիք
Ու տանիքի տակ՝ հսկա ընտանիք,
Որ, ճիշտ է, գիտեր հյուրեր ընդունել,
Բայց գիտեր նաև ճանապա՛րհ դնել,
Ու թե կտուրը կաթեր անձրևից՝
Գիտեր վերստին պատել սվաղով...
Մինչդեռ խուլ, անլուր, և կամ չարալուր
Ականջներն օտար միշտ հակված էին
Հայոց երգի մեջ
Լսել սոսափը պարսկազենդական,
Հայոց տաղերում
Որսալ մեղեդին հույն-բյուզանդական,
Հայոց խաղերում՝
Թուրք-թաթարական բայաթի-շարքի-ն:
Հայերն աշխարհում բանսարկված էին.
Սրերից հետո,
Թրերից հետո՝
Հիմա էլ լեզվի թունավոր նետով -
Ա՛ռ -
Զարկված էին...
Քեզ հարվածողին որպեսզի զարկես
Եվ ունեցվածքդ ու կյանքդ փրկես,
Պիտի զարկողին իր զարկից զրկես:

Թե ոստայնի պես ստեր են հյուսում,
Եվ դու կեղծիքը ճեղքել ես ուզում,
Պիտի սովորես ստողի լեզուն:
Իսկ նա շատ հաճախ ինքն էլ էր զգում,
Որ իր հաղթ բազկում
Տալիք հարվածի թափը պակաս է.
Դատապաշտպանի իր լեզուն արդար
Պտտում է հազիվ,
Պտտում է այնպես, կարծես կակազ է:
Մինչդեռ ուզում էր
Ու երազում էր
Պաշտոն ստանալ և դատախազի.-
Աշխարհի առաջ բարձրանալ տեղից
Ու հատ-հատ ասել.
-Խոսելն իզուր է, ճառելն՝ անտեղի:
Միստը՛ր, աղա՛, սը՛ր,
Տիկնայք մեծարգո, պարոնայք ազնիվ,
Քար ու կշեռքին ի՞նչը կհասնի:
Այս՝ կշռաքարը, այս էլ կշեռքը.
Մեզանից ահա մեր տաղն ու երգը,
Ձեզանից՝ կշեռքն ու կշռող ձեռքը:
Թող դժվարությամբ ու հսկա ջանքով
Բարձրանան-իջնեն կշռաթաթերը,
Անվստահությամբ ու կասկածանքով
Իրար հոտոտեն կշռաքթերը,
Եվ ճիշտը խոսի, լռեն ստերը:
Այս էր նա ուզում,
Այս օրը հուսում,
Բայց և զգում էր,
Որ հաղթ բազկում իր

Տալիք հարվածի թափը պակաս է.
Դատապաշտպանի ու դատախազի
Իր արդար լեզուն
Շարժվում է հազիվ՝
Պտտում է այնպես, կարծես կակազ է:
Իսկ եթե սուտը հերքել ես ուզում,
Պիտի սովորես ստողի լեզուն՝
Հրաժարվելով դատարկ զեղումից:
Պետք է սովորել,
Իսկ ո՞րտեղ, ումի՞ց:
Պետք է սովորել,
Իսկ ո՞ւմ մոտ, իսկ ո՞ւմ...